ՀԱԺԿ

ԳԹԻ ՑԵՎ ԿԵՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

№ 236 A

ՀՐԱՀԱՆԳ
ԳԹԱՆՑԻ ՊԱՀԱՊԱՆԻՆ

656.2
Հ-99

ՑԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

1 9 3 5

Յուրաքանչյուր յերկաթուղային գործակալ պաշտոնական պարտականությունները կատարելիս պետք է ունենա հրահանգը։

ՀՐԱՀԱՆԳԸ ՏՐՎԱԾ Է

Ազգանունը	Աշխատանքի տեղը	Տայքի ժամանակ.

656.2 ԱՐ
Հ-99
0 1 OCT 2010

ՀԾԺԿ
ԳԾԻ և ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳ
ԳԾԱՆՑԻ ՊԱՀԱՊԱՆԻՆ

Պ 578	Ներկա հրահանգը պետք է մտցվի «Յերկաթուղային գործակալներին ձեռնարկներով ժամանակավորելու կանոններում» (ԸԸ. № 0/198) ըստ կարգի 109-ա հոդվածի տակ։

ԼՇԿ—3

1008/3729

ՌՍՖՍՀ ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆԻՆ ՎԵՐՉՈՒԹՅՈՒՆ
Գոս. Ուսմ. Ուսումնական գրական հրատ.
ՀՈՒՀ- ԹԻԹԵՎ
1935

24.453

Խմբագիր՝ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
Թողարկիչ՝ Ֆ. ՄԻՐԿՈՎԻՉ
Հանձնված է տպագրության 26/VII
Ստորագրված է տպելու 9/VIII 1935 թ.
Պատվեր № 1441.
Տիրաժ 1000
Գլավլիտ Б—1309

Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան կարմրադրոշ տպարան
«Զարյա Վոստոկայի» հրատարակչություն

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Գծի և կառուցվածքների կենտրոնական կառավարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար՝ ԿՅՈՒՆԵՐ
26 դեկտ. 1934 թ.

ՀՐԱՀԱՆԳ

ԳԾԱՆՑԻ ՊԱՀԱՊԱՆԻՆ

(1932 թ. հունիսի 15-ից ՑՈՒՊ-ի հաստատված գծանցի պահապանին հրտհանգի վերացմամբ (բր/367 յեվ ՀՃԺԿ-ի գծի կենարոնական վարչություն) 1932 թ. հունիսի 20-ից № 31/ՑՊ կարգադրությամբ հայտարարված

I

ՊԱՇՏՈՆԸ, ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՑԵՎ ՍՏՈՐԱԴՐՎԵԼԸ

§ 1. Գծանցի պահապանը նշանակվում է յերթևեկության անվտանգությունը յերկաթուղային գծով գծանցի սահմաններում և նրանից յերկու կողմով 50 մետր տարածությամբ պահպանելու համար, նրա անորինության տակ գտնվող և պահպանման համար նրան հանձնված յերկաթուղու գույքի ամբողջությունն ու անվնաս պահպանումն ապահովելու համար:

§ 2. Գծանցի պահապանի պաշտոնին նշանակվող անձը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

ա) 18 տարեկանից պակաս չլինել և գրագետ լինել,

բ) անցնել նախնական բժշկական քննություն,

գ) քննություն բռնել ներկա հրահանգի (նրան կից տեխնիկական բաժանումով) ազդանշանների կանոնների և յերկաթուղային տրանսպորտի բանվորների և ծառայողների կարգապահության մասին կանոնադրության դիտության մեջ:

§ 3. Հիմնական քննությունից անկախ, ծառայու-

թյան նշանակվելիս, գծանցի պահապանը յենթարկվում է պարբերական քննությունների գծում սահմանված կարգով:

§ 4. Գծանցի պահապանը ծառայության նշանակվում է և ծառայությունից տեղափոխվում կամ հեռացվում է դիստանցիայի պետի կողմից ճանապարհի վարպետի ներկայացմամբ:

§ 5. Գծանցի պահապանը անմիջապես յենթարկվում է գծի բրիգադիրին և կատարում է նրա բոլոր կարգադրությունները:

§ 6. Գծանցի պահապանը պարտավոր է նայել կատարելու ճանապարհի վարպետի, ճանապարհի ավագ վարպետի, գծի դիստանցիայի պետի, երկաթուղու պետի և նրանց փոխարինող անձանց կարգադրությունները և ցուցմունքները: Ստացված կարգադրությունների մասին գծանցի պահապանը զեկուցում է գծի բրիգադիրին, հաղորդելով, ինչպես է նա կատարված:

Եթե գծանցի պահապանին կարգադրություններ տվող անձինք նրան անծանոթ են, նա պետք է պահանջի ներկայացնելու անձնական վկայական:

§ 7. Ծառայության մտնելիս ճանապարհի վարպետը տալիս է գծանցի պահապանին. ներկա հրահանգը, ազդանշանների կանոնները, երկաթուղային տրանսպորտի բանվորների և ծառայողների կարգապահության մասին կանոնադրությունը, ձեռքի դույնավոր ազդանշանային դրոշակների կոմպլեկտը, ազդանշանային լապտեր սպիտակ և դույնավոր ապակիներով, տուփ՝ վեց ճայթուկներով (պետարներով), ազդանշանային փչելու յեղջյուր, կոստիլի մուրճ, գծանցի քերակ, ավել և ուրիշ ինվենտար համաձայն գծում սահմանված նորմաների: Այս բոլորը ընդունվում է փոխադրական տեղեկագրով, որի յերկրորդ օրինակը, գծանցի պահապանի կողմից ստորագրված, պահվում է ճանապարհի վարպետի մոտ:

Ծանոթություն—Այն գծանցներում, որտեղ սահմանված է միաժամանակ յերկու պահապանների հերթապահություն, ազդանշանային պատկանելիքների կոմպլեկտը տրվում է նրանցից յուրաքանչյուրին:

§ 8. Գծանցի սպասարկման կարգը որոշվում է դիստանցիայի պետի կողմից և հայտարարվում է գծանցի պահապանին ճանապարհի վարպետի կողմից: Գծանցային հսկարանում կախվում է հայտարարություն ճանապարհի վարպետի ստորագրությամբ, ցույց տալով գծանցի կարգը, նրա սպասարկման կարգը, հերթափոխային սպասարկման դեպքում պահապանների միջև հերթափոխության բաշխումը, ինչպես նաև գնացքների չվացուցակը:

II ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 9. Գծանցի պահապանը իր պաշտոնական պարտականությունները կատարելիս պետք է առաջնորդվի ներկա հրահանգով (նրան արդրված տեխնիկական բաժանումով) ազդանշանների կանոններով, երկաթուղային տրանսպորտի բանվորների և ծառայողների կարգապահության մասին կանոնադրությամբ, ինչպես նայել գծում գործող հրամաններով, կանոններով և կարգադրություններով, որոնք վերաբերում են գծանցի պահապանի պաշտոնին, ստորագրությամբ նրա ձեռքը տրված:

§ 10. Գծանցի պահապանը գծանցում հերթապահություն է անում դիստանցիայի պետի կողմից հաստատված գրաֆիկով և ժամացուցակով, թույլ չտալով հերթապահություն անելու ուրիշի փոխարեն առանց ճանապարհի վարպետի թույլտվության: Հերթապահության անցնելիս և նրան հանձնելիս գծանցի պահապանը պարտավոր է ստորագրել հերթապահության մատյանում, որը պահվում է գծանցային հսկարանում:

§ 11. Յերկաթուղային գծերում դտնվելիս, գծանցի պահապանը իր հաղուստում այնպիսի դույն

չպետք է ունենա, որ կարող է ընդունվել, որպես ազդանշանային:

§ 12. Գծանցում հերթապահություն անելու ժամանակ պահապանը իր մոտ պետք է ունենա. ա) ցերեկը ցերեկվա, իսկ գիշերը գիշերվա ձեռքի ազդանշաններ. բ) ազդանշանային յեղջյուր. գ) տուփ ճայթուկներով (պետարդներով):

Մառախլապատ և գիշեր ժամանակ գծանցի պահապանը պարտավոր է ունենալ վառած ազդանշանային լապտեր:

§ 13. Գործիքը, կամ ազդանշանային պարագաները փչացնելիս և կորցնելիս գծանցի պահապանը պարտավոր է անմիջապես այդ մասին հաղորդել գծի բրիգադիրին: Անպետք գործիքները և ազդանշանային պարագաները հանձնվում են գծի բրիգադիրին:

§ 14. Գծանցի պահապանը պարտավոր է.

ա) մաքրելու ռելսերի և հակառելսերի (контр-рельс) միջի արանքները ցեխից, աղբից և ձնից, ավելել աղբը ռելսերի վրայից և գծանցի ամբողջ հրապարակը և դեպի նրան առբերման ուղիները կարգապահության և մաքրության մեջ.

բ) գիծը մաքրել ձնից և խոտից, ուղղել խճավոգի շերտը գծանցի յերկու կողմը 50 մետր տարածությամբ և հսկել ձնամաքրիչների համար գծային նշանների սարքին վիճակին.

գ) հսկել փակոցների, սալարկի վրաքաշին, խողովակների և գծանցների տակի կամուրջների սարքին դրության.

դ) հսկել, որպեսզի գծանցներով ոգտվելու կանոններին վերաբերող՝ գծանցների մոտ յեղած ցուցանակները սարքին դրության մեջ լինեն:

յե) զեկուցել գծի բրիգադիրին գծանցում բոլոր անսարքությունների և վնասվածքների մասին, այն դեպքում, յեթե գծանցում գեմ առնե սայլ, կամ ավտոմոբիլ, նույնպես և գծանցի ամեն տեսակ բռնվելու դեպքում, գծանցը, որպես վտանգավոր տեղ, պաշպանել կանգառի ազդանշաններով և յեղջյուրով տալ ընդհանուր ահակոչի ազդանշան, կամ ուրիշ միջոցով հավաքել բանվորներին գծի շուտափույթ ապատման համար.

զ) ձմեռը ձնհալի ժամանակ, ձյունն ածել գծանցի վրաքաշի վրա, որպեսզի ծանր սայլերը ազատ կերպով կարողանան անցնել գծանցով.

ե) հետևել ջրի անցմանը գծանցների տակի խողովակներում և կամուրջներում, իր ժամանակին մաքրելով նրանց ցեխից և աղբից, իսկ գարնան, գարնանային ջրերի անցնելու ժամանակի մոտեցմանը՝ և ձնից:

§ 15. Առաջին կարգի գծանցներում փակոցները ցերեկը և գիշերը բաց պահել, փակելով և փականքներով փակ պահելով նրանց գնացքի, գծային վագոնիչիկի, կամ դրեզինայի անցնելուց առաջ: Յերկրորդ կարգի գծանցներում փակոցները ցերեկը բաց պահել, փակելով նրանց և փականքներով փակ պահելով գնացքի, գծային վագոնչիկի, կամ դրեզինայի անցնելուց առաջ, իսկ գիշերը և մառախուղի ժամանակ փակոցները փակ պահել և փականքներով փակել, նրանց բանալով միայն յերթևեկողներին անց թողնելու, կամ անասուններին քշելու համար:

Յերրորդ կարգի գծանցներում փակոցները ցերեկը և գիշերը փակ պահել փականքներով, նրանց բանալով միայն յերթևեկողներին անց թողնելու, կամ անասուններին քշելու համար:

§ 16. Փակոցները բանալուց առաջ հավաստիանալ, որ յերթևեկողները, կամ քշվող անասունները վրա հասած չեն լինի գնացքի, գծային վագոնչիկի, կամ դրեզինայի կողմից:

Առաջ բանալ այն փակոցը, որի մոտ չեն գրանվում կառքեր, անասուններ և այլն.

Սկզբում փակել այն փակոցը, որի առաջը կան

յերթեվեկողներ, կամ անցորդներ, կամ վորին նրանք մոտենում են:

§ 17. Իր հերթապահության ժամանակ առանց բացակայության դտնվել դծանցում և հանդիպել առանց բացառության բոլոր դնացքները և դրեզինները ցերեկվա և գիշերվա ամեն ժամանակ, իր մոտ ունենալով ճայթոցիկներ (պետարդներ) ազդանշանային յեղջյուր, ցերեկը ազդանշանային դրոշակներ և գիշերն ու մառախուղոտ ժամանակ վառած ազդանշանային լապտեր:

§ 18. Գնացքի, դրեզինայի, կամ դծային վագոնչիկի անցնելուց առաջ, դիտել, արդյոք ռելսերի վրա, կամ նրանց մոտ, չկան վորևե առարկաներ, վորոնք խանգարում են գնացքի անցմանը, և հայտնաբերելիս անմիջապես հեռացնել նրանց:

Առանց բրիգադիրի թույլտվության չթողնել դծանցի վրայով առանձնապես ծանր առարկաների (կաթսաների, մեքենաների և այլն) փոխադրությունը:

§ 19. Հսկել, վորպեսզի դծանցին կից ամրացրած լապտերները սարքին լինեն, և հետևել նրանց անընդհատ վառվելուն գիշեր ժամանակ:

Հսկել ելեքտրոդանգակային ազդանշանի սարքին գործողությանը, վորտեղ այդպիսին սարքված է: Գնացքի դուրս դալու մասին զանգակով ազդանշանալուց հետո, ընդհատել յերթեվեկությունը դծանցով և փակել փակոցները: Ելեքտրոդանգակային ազդանշանի անսարքին գործողության դեպքում—այդ մասին անմիջապես հաղորդել դծի բրիգադիրին:

§ 20. Դծի միջով չանցնել և չվազել հենց գնացքի մոտով: Դծամեջում, կամ հարևան դծի վրա չբանդնել: Պառկած, կամ նստած չհանգստանալ ճանապարհի պատատի վրա:

Ձնամաքրիչի անցնելու ժամանակ—դծից մի կողմը քաշվել այնպիսի տարածությամբ, վորպեսզի ան-

վտանգության մեջ լինել ձնամաքրիչի կողմից թափթփվող ձնից և ձնակույտերից:

§ 21. Հետևել, վորպեսզի առանց ճանապարհի վարպետի թույլտվության չենքեր, կամ վորվածքներ չարվեն արտուղման չերտի սահմաններում, ինչպես նայել և նրա սահմանների մոտ, և բոլոր խախտումների մասին անմիջապես հաղորդել բրիգադիրին:

§ 22. Գծանցում գնացքը, առանձին շոգեքարշը, կամ դրեզինան հնարավորության չափ հանդիպել ներ չարվեն արտուղման չերտի սահմաններում, ինչմանակ, յեղջյուրով ազդանշան տալ և, պաստառից իջնելով, պահել ազդանշանների կանոններով պահանջվող ազդանշանը:

Գնացքի, առանձին շոգեքարշի, կամ մոտոդրեզինայի դծանցի միջով անցնելուց անմիջապես հետո, դուրս դալ դծի մեջտեղը և ազդանշանների կանոններով պահանջվող ազդանշանը դարձրած պահել հեռացող գնացքի կողմը: Ըստ վորում առաջ պետք է քաշվել դծի մի կողմը, իսկ հետո մյուս կողմը, դիտելու համար, արդյոք հեռացող գնացքում ամեն ինչ սարքին է և իրենց տեղումն են՞ արդյոք պոչի ազդանշանները, պոչի ազդանշանների բացակայելու դեպքում տալ անջատման ազդանշան:

Ձեռքի սայլակի (դրեզինայի), կամ վագոնչիկի անցնելու դեպքում, վարվել նույնպես, ինչպես և գնացքի անցնելուց հետո, բայց նրանց անցնելուց հետո միայն պետք է ցուցադրված լինի կարմիր ազդանշան, վորը պիտի դարձնել դրեզինայի, կամ վագոնչիկի ընթացքի հակառակ կողմը:

Վագոնչիկի անցնելուց հետո կարմիր ազդանշանը պահել մինչև այն ժամանակ, մինչև վոր դծանցի միջով անցնի ազդանշանատուն, վորը պաշտպանում է վագոնչիկը հետևից. յեթե վագոնչիկը դծից հանվի հետևի ազդանշանատույի անցնելուց առաջ, այն

դեպքում կարմիր ազդանշանը պահել մինչև վագոնչիկը գծից հանելը: Ձեռքի սայլակի (դրեզինայի) անցնելուց հետո կարմիր ազդանշանը պահել յերեք րոպե տևողությամբ: Գնացքը անցնելիս հետևել գնացքային բրիգադի կողմից տրվող ազդանշաններին և միջոցներ ձեռք առնել նրանք մեքենավարին փոխադրության համար:

§ 23. Առանց չոգեքարշի գնացող վագոններ հայտնաբերելու դեպքում, միջոցներ ձեռք առնել անձամբ, կամ ահակոչի ազդանշանով հավաքված ուրիշ պահապանների և բանվորների ողնությամբ, վորպեսզի կանգնեցնել վագոնները, արգելակել և պաշտպանել կանգառի ազդանշաններով: Այդ բանն անելը անհնարին լինելու դեպքում— յեղջյուրով տալ ընհանուր ահակոչի ազդանշան հեռացող վագոնների կողմը:

§ 24. Գծանցում գնացքի, մոտոդրեզինայի, կամ չոգեքարշի կանգառման դեպքում—անմիջապես ներկայանալ գլխավոր կոնդուկտորի, կամ նրան փոխարինող անձի տրամադրության տակ:

Լսելով յեղջյուրով տրվող ահակոչի ազդանշանները՝ այդպիսիները կրկնել:

§ 25 Գծային պահապանը պարտավոր է տալու անցնող գնացքներին կանգառման ազդանշաններ հետևյալ դեպքերում.

ա) յեթե նա նկատեց մնասված չարժական կազմում, բեռնման անկանոն դրություն, հրդեհ, կամ ընդհանրապես վորյևէ անսարքություն, վորի հետևանքով կարող է գնացքի հետ խորտակում, կամ ավարիա պատահել.

բ) յեթե գնացքը, վորը ընթանում է յերկուղանի գծի անկանոն գծով, չունենա սահմանված ազդանշաններ.

գ) յեթե նա նկատում է, վոր մեկ գնացքը գնում է մյուսի հանդեպ միևնույն գծով, կամ յեթե մեկ գնացք վրա յե հասնում մյուսին, դրեզինային, կամ գծային վագոնչիկին. վերջին դեպքում կանգառման ազդանշաններ տրվում են միայն վրա հասնող գնացքին.

դ) յեթե նկատե գնացքից մարդու վայր ընկնելը.

յե) յեթե գնացքը կանգառման ազդանշանից առաջ կանգ չե առել.

զ) յեթե գնացքից, կամ գծից մեքենավարին կանգառման ազդանշաններ են տալիս, իսկ նա գնացքը չե կանգնեցնում.

ե) յեթե նա հայտնաբերի վնասված, կամ գծի ցանկավակումն, կառուցվածքի վնասումն, վորը վտանգավոր է գնացքների յերթևեկության համար.

ը) արտոգման չերտում հրդեհի դեպքում, վորը սպառնում է յերթևեկմանը, կամ յերկաթուղու գույքին.

թ) իր հայեցողությամբ, իր պատասխանատվությամբ—և ուրիշ դեպքերում, վորանք սպառնում են յերթևեկության անվտանգությանը և մարդկանց:

§ 26. Գծանցի մոտ սկավառակներ, կամ սեմաֆորներ դանվելու դեպքում գծանցի պահապանը պարտավոր է ուշադրություն դարձնելու, վորպեսզի գիշերը և մառախուղոտ ժամանակ ազդանշանի դրությունը համաձայնեցվի իրեն կողմից ցույց տրվող ճրագի հետ, և նրանց տարբերվելու, կամ պարզ չլինելու դեպքում—ռելսերի վրա սեմաֆորներից և սկավառակներից 1200 մետր տարածության վրա գծամասի կողմը՝ դարսել ճայթուկներ:

Սխալ ցույց տված ազդանշանների մասին հաղորդել կայարանի պետին, կամ կայարանի հերթապահին:

Յեթե հնարավորություն չլինի այդ բանն անելու անձամբ, կամ վորևե մեկի ծանուցմամբ ուղարկել կայարան—ճայթուկներ (պետարդներ) դարսել, ձեռքի ազդանշաններով կանգնեցնել առաջին անցնող գը-

նացքը, կամ դրիվինան և հաղորդել գնացքի մեքենավարին և գլխավոր կոնդուկտորին, կամ դրիվինայում յերթևեկողներին սկավառակի, կամ սեմաֆորի ճրագների սխալ ցույց տալու մասին:

§ 27. Գծի վրա կողմնակի առարկաներ հայտնաբերելու դեպքում գծանցի պահապանը պարտավոր է.

ա) հեռացնել նրանք ռելսերից և գծի պաստառից դրսի ռելսից յերկու մետրից վոչ մոտիկ տարածությամբ.

բ) գնացքից ընկած առարկաները, ինչպես նայելով ճանապարհին գտնված չարժական կազմի մասերը հանձնել գծի բրիգադիրին, իսկ յեթե գծի վրա գտնված առարկաները պահապանը իր ուժերով չի կարող հավաքել-նա պարտավոր է հաղորդել գծի բրիգադիրին:

§ 28. Հակահրդեհային միջոցառումների նկատմամբ գծանցի պահապանը պարտավոր է.

ա) հետևել, վորպեսզի հեշտ վառվող առարկաները, վորոնք պատկանում են կողմնակի անձանց և հիմնարկներին, գծից հեռու լինեն արտողման սահմանից 20 մետրից վոչ մոտիկ տարածությամբ. բոլոր խախտումների մասին-հաղորդել գծի բրիգադիրին.

բ) յերկաթուղում, կամ գծին հակվող տեղամասերում հրդեհ առաջանալու դեպքում-ձեռք առնել բոլոր միջոցները նրա լիկվիդացիայի համար և տալ հրդեհային ահակոչի ազդանշաններ: Այն դեպքում, յերբ հնարավորություն չլինի առանց կողմնակի ողնության լիկվիդացիայի յենթարկելու հրդեհը, անմիջապես պահանջել ողնության գալու մոտակա և հերթապահությունից ազատ պահապաններին, ինչպես նաև տեղեկացնել գծի բրիգադիրին. յեթե հրդեհը սպառնում է գնացքների յերթևեկության անվտանգությանը-այդ տեղը պաշտպանել կանգառման ազդանշաններով.

գ) թույլ չտալ կրակ անելը ոտարացման շերտում, բայց յեթե այդ պահանջվում է աշխատանքի պայմաններով, այն դեպքում կրակը պետք է լինի աշխատանքին մասնակից վորևե անձի հսկողության տակ: Չի թույլատրվում կրակ անել կամուրջների, կառուցումների մոտ, կապի լարերի տակ, անտառային նյութեղենների պահեստների մոտ և այլն:

§ 29. Հսկել գծի պարագաների պահպանմանը և թույլ չտալ փչացնելու և գողանալու կիլոմետրային, սահմանագլխային և ուրիշ նշաններ, ձնի պատսպարանքներ, վորոնք դարսված են ոտարացման շերտում և գծանցին մոտ նյութեղենները և ընդհանրապես ամեն տեսակ յերկաթուղային գույք:

Հատուկ ուշադրություն դարձնել, արդյոք չեն պատրաստվում գողանալու գծի և գծանցի պարագաները, կամ նրանք փչացնելու, ինչպես նայելով փակելու գիծը և գծանցը: Այդպիսի պատրաստությունները հայտնաբերելու դեպքում, միջոցներ ձեռք առնել նախազգուշացնելու հանցագործությունը և բռնելու չարագործներին, կամ նրանց հետևելով և ճանաչելով նրանց ով լինելը, այդ մասին հաղորդել գծի բրիգադիրին և ներքգործկոմի պետական անվտանգության գլխավոր կառավարչության լիազորին (ԳՈՒԳԲ):

§ 30. Թույլ չտալ լուսանկարելը և պլանների հանելը ոտարացման շերտի սահմաններում առանց այդ բանի համար համապատասխան թույլտվություն ստանալը, ինչպես նայելով կողմնակի անձանց տեղեկությունները չտալ, վորոնք վերաբերվեն յերկաթուղուն և նրա կառուցվածքներին:

Թույլ չտալ կեղտոտելու արտողման շերտը, ջրհորները և ջրամատակարարման աղբյուրները:

§ 31. Յեթե գծում կամ արտողման սահմաններում հայտնաբերվի մարդու դիակ, գծանցի

պահապանը պարտավոր է այդ մասին հաղորդելու գծի բրիգադիրին, կամ մոտակա կայարանին և մինչև իշխանությունների ժամանելը պարտավոր է.

ա) յեթե դիակը անցնող գնացքի տակ մնալու լինի—տեղափոխել նրան գծից դուրս, հնարավորության չափ, չփոխելով նրա դրությունը.

բ) վոչ վոքին թույլ չտալ մոտենալու դիակին.

գ) բոլոր միջոցները ձեռք առնել արյան հետքերը պահպանելու համար:

§ 32. Գծին կողմնակի անձանց նկատմամբ գծանցի պահապանը պարտավոր է հաստատակամությամբ և վճռականությամբ, բայց քաղաքավարի կերպով պահանջելու կատարել գծում սահմանված կանոնները. թույլ չտալ փակոցների ինքնակամ բանալը գծանցնելում, գծերով առանց սահմանված անցաթղթերի անցնելը, անցնող գնացքների վրա քարեր, փայտեր և ուրիշ առարկաներ գցելը, հեռագրային սյուների վրայի առանձնիչների ջարդելը, ոտարացման չերտում պահպանակի ծառատնկերի փչացնելը, կամ վոչնչացնելը. այս կանոնները խախտող անձանց հանձնել ներքին գործերի կոմիսարիատի պետական անվտանգության գլխավոր կառավարչության (ԳՈՒԳԲ) լիազորին, յերկաթուղային պահակին, կամ գծի բրիգադիրին:

§ 33. Առանց բրիգադիրի թույլտվության, գծանցի պահապանը իրավունք չունի ընդհատելու իր հերթապահությունը անձնական կարիքների համար:

§ 34. Հիվանդության դեպքում, կամ վորյևե պատճառով, անկարող լինելու կատարել իր պարտականությունները գծանցի պահապանը պետք է անմիջապես այդ մասին հաղորդե գծի բրիգադիրին:

§ 35. Գծանցի պահապանի համար հանդստի օրերը սահմանվում են դիսատանցիայի պետի կողմից հաստատված գրաֆիկով:

§ 36. Արձակուրդի, հանդստի օրերի և հիվանդության ժամանակ գծանցի պահապանը իր պարտավորությունների կատարումը պետք է հանձնի ուրիշ անձնավորության՝ գծի բրիգադիրի նշանակմամբ:

III Պատասխանատվությունը

§ 37. Անգործունեության, պարտավորությունների անկանոն և վոչ լրիվ կատարման դեպքում գծանցի պահապանը պատասխանատու է համաձայն յերկաթուղային տրանսպորտի բանվորների և ծառայողների կարգապահության մասին կանոնադրության՝ և դատական կարգով:

Գծի և կառուցվածքների կենտրոնական կավարչության գծի սեկտորի պետ՝
Ն. ՄՈՒՐԱՇԿԻՆ

Հաստատում եմ. գծի և կառուցվածքների կենտրոնական կառավարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար՝
ԿՅՈՒՆԵՐ

26-ն դեկտեմբերի 1934 թ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ

Գծանցների նշանակությունը

Գծանցի պահապանի հրահանգին

Երկաթուղային գծի խճուղային, կամ կարծրահողային ճանապարհների հետ հատման տեղերում սարքվում են գծանցներ:

Գծանցների նպատակն է տալ անվտանգ անցումն գծերի միջով մարդկանց, ավտոմեքենաներին, տրակտորներին, սայլերին և այլն: Գծանցները բաժանվում են գծանցի պահապաններով պահպանվող և չպահպանվող:

Երկաթուղային յերթևեկության խտությունից, յերթևեկողների քանակից և գծանցների տեսանելիությունից կախված պահպանվող գծանցները լինում են 1, 2 և 3 կարգի (տես § 15 գծանցի պահապանի հրահանգի):

Գծանցները այնպես պետք է չինվեն, վորպեսզի ապահովված լինի հնարավորության չափով լավ տեսանելիությունը ինչպես անցնող գնացքների մեքենավարների և ավտոդրեզինաների չոֆերների համար, նույնպես և գծանցների միջով սայլերով և ավտոմեքենաներով անցնող անձանց համար:

Տեսանելիությունը համարվում է բավարար այն դեպքում, յեթե գծանցի մեջտեղից, դրսի ռելսից 20 մետր տարածության վրա թե մեկ, թե մյուս կողմով գնացքը յերևում է (գծանցով) անցնողներին յերկու կողմից 200 մետրից վոչ պակաս տարածության վրա, իսկ գծանցի մեջտեղը, իր հերթին, տեսանելի յե մոտեցող գնացքի մեքենավարին 700 մետր տարածության վրա թեքված քներում, (уклон) 500 մետր՝ տափարակ տեղերում և 300 մետր՝ վերելքներում:

Ինախազգուշացնող ազդանշաններ և մակագրություններ:

Վատ տեսանելիության դեպքում պահպանվող գծանցի թե մեկ և թե մյուս կողմից անցնողներին նախազգուշացնելու համար – յերկաթուղային պաստառի վրա ամրացվում են հատուկ ցուցիչներ– «սուլիչ» (նկար 1) գծանցից մինչև մեկ կիլոմետր տարածության վրա:



Նկ. 1. Նկ. 2.

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ
Ս. ՍԱՄՍԱՆՅԱՆ

Պաստառի յերկու կողմից գծանցների մոտ սյուների վրա ամրացվում են ազդանշաններ. փոքր յերթևեկության դեպքում – վորպես տախտակ «Զգուշացիր գնացքից» մակագրությամբ (նկար 2–ա), իսկ մեծ յերթևեկության դեպքում – խաչաձև (նկար 2), «Զգուշացիր գնացքից» մակագրությամբ տախտակները պետք է դարձած լինեն դեպի դաշտը:

Նկ. 2ա.

Նկ. 3.

Գծանցի յերկու կողմերից հատուկ սյուների վրա պետք է ամրացվեն հատուկ տախտակներ պարտադիր վորոշումներից քաղվածքներով, ցույց տալով գծանցից ոգտվելու և այդ վորոշումները խախտելու համար տույժերի կարգը:

Բացի դրանից խճուղային ճանապարհների գծանցներին մոտ ամրացվում են նախազգուշացնող նշաններ յեռանկյունի վահանիկների ձևով, վորոնց ծայրերը ներկված են մուգ կարմիր գույնի, իսկ մեջտեղը սև ներկով նկարված է յերկաթուղային պաստառի մասը յերկու ռելսերից հինգ չպալներով:

Մեծ յերթևեկությամբ գծանցները

Գծանցի լայնությունը ռելսերի մակերեսում պետք է լինի չորս և կես մետրից վոչ պակաս, իսկ խճուղու և սալահատակած ճանապարհների վրա–վոչ պակաս նրանց անցման մասի լայնությունից, այսինքն չորս և կես մետրից մինչև ինը մետր. յերկաթուղու կարգից կախված: Ելեքտրականացրած ուղեմասերում և ավտոբլոկիրովկայի յենթարկված ուղեմասերում հանդերձի (վրաքաշի) մակերեսը 25 միլիմետրով բարձր պետք է լինի ռելսի գլխիկի ծայրից:

Գծանցի ամբողջ լայնությամբ ռելսերի յերկարությամբ պետք է դարսված լինեն հակառելսեր, պինդ ամրացրած չպալներին: Հակառելսերի գլխիկները պետք է մտնեն գծային ռելսերի գլխիկների տակ: Գծային ռելսի և հակառելսի գլխիկների միջև ակոսաձև փոսի լայնությունը ուղիղ տեղերում 65 միլիմետրից պակաս չպետք է լինի:

Հակառելսերը պետք է ծռված լինեն դեպի գծի մեջտեղը յերկարությամբ յուրաքանչյուր ծայրից 300 միլիմետրից վոչ պակաս: Գծի մեջտեղից յուրաքանչյուր կողմը 10 մետրից վոչ պակաս տարածությամբ անցման ճանապարհի պաստառը պետք է հորիզոնական լինի:

Գծանցների տակով ջուր անցկացնելու համար կառուցվում են կամուրջներ և խողովակներ. քարե, բետոնե, մետաղյա, կամ փայտյա (նկար 4):

Եթե գծանցի պաստառի ածվածքի բարձրությունը մեկ մետրից ավել է, այն դեպքում պաստառի ա-

Նկ. 4.

փի յերկարությամբ չինվում են պահպանվող սյունիկներ մեկ մետր բարձրությամբ: Սյունիկների միջև տարածությունը պետք է լինի մեկ և կես մետր։ Առաջին սյունիկն ամրացվում է դծի մեջտեղից յերեք

մետր տարածության վրա: Սյունիկները չինվում են 15 սանտիմետր շառավիղով գերաններից և թաղվում են մեկ մետր խորությամբ:

Մոտակա ռելսից ութ և կես մետրից վոչ մոտիկ տարածության վրա տեղքվում են փակոցներ, վորոնք վականքներ ունեն փակելու համար:

Փակոցների բարձրությունը անցման ճանապարհի պատատի մակերևույթից չինվում է մեկ մետրից մինչև մեկ մետր քսան սանտիմետր: Փակոցները բացվում են դծի կողմը: Փակոցները և սյունիկները պետք է ներկված լինեն:

Յեթե դծանցի միջով մանր անասուններ քշվեն, այն դեպքում դծանցի վակոցի և յերկաթուղային գծի միջև պատսպարանքները այնպիսի կառուցվածք պետք է ունենան, վորպեսզի անասունը չկարողանա յերկաթուղու պատատի վրա անցնել:

Գծանցի պատատը ծածկվում է պինդ հանդերձով (քար, ասֆալտ և այլն): Գծանցի հանդերձը բաղկացած է յերկու շերտերից. վերևի շերտը 15 սանտիմետր լայնությամբ, բաղկացած է խեճից, վորի վրա ածված է շաղախ և վորը պինդ տափանած է, կամ նրա տեղը բաղկացած. ներքևի շերտը 15 սանտիմետր լայնությամբ, բաղկացած է չոր մաքուր ավազից (նկ. 5, 6 և 7):

Ռելսերի միջի վրաքաշը բաղկացած է յերկու շերտերից: Ցածի շերտը բաղկացած է չամուտի (сосна) բրուսներից 9 սանտիմետր հաստությամբ, չորս կանտով տաշված և մաշուքով կրեոզոտով տոգորված:

Վերին շերտը բաղկացած է չամուտի կտրտելու տախտակներից 6 սանտիմետր հաստությամբ: Ցածի և վերին շերտերը միացրած են կապվածքով: Կապվածքի յերկայնքի բրուսները – կաղնուց են, իսկ լայնքինը՝ չամուտից:



Նկ.

Վրաքաշի տախտակները դասավորվում են գծի լայնությամբ: Վրաքաշը չալանների ծայրում (ռելսերից դուրս) նույնպես բաղկացած է յերկու շերտերից. ցածի և վերևի: Վրաքաշի վերևի և ցածի շերտերը լավ հետ ամրացվում են մոտավորապես 150 միլիմետրը յերկարությամբ մեխերով: Գծանցի վրաքաշի տակ ավազե բալաստը անպայման փոխարինվում է խեճային բալաստով:

Փոքր յերթևեկությամբ գծանցները

Փոքր յերթևեկությամբ գծանցները նշանակված են յերկաթուղու պատատով սայլաշարի տրանսպորտը անցկացնելու համար առանց ծանրաքաշ առարկաները

փոխադրելու: (Նկար 8 և 8 ա): Գծանցի անցման մասի լայնությունը, ինչպես վերևը ցուցադրված է, պետք է հատվող ճանապարհի անցման մասի լայնությունից պակաս չլինի, այսինքն չորս, կամ չորս և կես մետրից (միայնակ սայլանցի դեպքում) մինչև 9 մետր


Գծանցի գլուխ
Գծանցի գլուխ
Գծանցի գլուխ



Նկ. 7.

(կրկնակի սայլանցի դեպքում)։

Այդ գծանցների վրաքաշը բաղկացած է մի շարք չեբաներից, հին չպալներից, կամ հին կամրջի փոխադրական բրուսներից պինդ կերպով իրար կպցրած։

Ռելսերի մոտ դարսված նեղքին բրուսները ռելսի կողմը դարձրած կողմից ունեն յերկու կտրվածք. վերինը (ա) – անընդհատ ակոսաձև կիսախողովակ կապմելու համար և ցածինը (բ) – միայն չպալների վրայից փորված՝ տակդիրները և կոսաիլները ծածկելու համար։

Ռելսերի մոտ տեղավորված արտաքին բրուսները, ռելսի կողմը դարձրած կողմից, ունեն մեկ ցածի կլոր վածք (վ), չպալներից վրայից փորված տակդիրները և կոսաիլները ծածկելու համար։

Բրուսները և գերանաշերտերը կարվում են յուրաքանչյուր չպալին մեխերով, փորոնք դասավորված են շախմատային կարգով։ Ակոսները (նկար 8 ա) շարժական կազմի անիվների անցման համար կազմվում են մի կողմից ռելսի շարքում պառկած բրուսի վերևի



Նկ. 8.



Նկ. 8 ա.

կտրվածքով, և մյուս կողմից – ռելսի գլխիկով և ձողով (գ), փորը լցնում է ռելսի փոսը։

Ակոսի խորությունը 50 միլիմետր է, լայնությունը դեպի ներքև 65 միլիմետր է, ակոսների վերևում լայնանում է մինչև 80 միլիմետր, բրուսի կողքի կողմի կտրվելու հետևանքով։

Ցուցված տեսակի ջրզանը հարմար է նրա մեջ հավաքվող ձյունը, սառույցը և աղբը մաքրելու համար:

Գծանցի պատատակի վերին մասը մուտքի սկզբից մինչև վրաքաշը ծածկվում է մետաղ սայլակմամբ ափսի չերտի վրա:

Գծի կառուցվածքների կենտրոնական կառավարչության Գծի սեկտորի պետ՝

Ն. ՄՈՒՐԱՇԿԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ
Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0296065

24.453

2Г1

5 668

ИНСТРУКЦИЯ

ПЕРЕЕЗДНОМУ СТОРОЖУ